

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՈՐՈՇՈՒՄ 7/2

2015թ. մայիսի 7-ի թիվ 7 նիստի

<<ԿՐԵՂԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԿՐԹԱԳԻՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ>> ԵՎ <<ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ>> ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի կանոնադրության 49-րդ կետի 4-րդ ենթակետով և ԵՊՀ գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 3-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի գիտական խորհուրդը որոշում է.

1. <<Կրեղիտային համակարգով դասախոսների որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի կառուցվածքն ու բովանդակությունը>> և <<Երևանի պետական համալսարանում պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագրի կազմակերպման կանոնակարգ>> փաստաթղթերում կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները:

Հ/հ	Փաստաթղթի ենթակետը	Հինը	Նորը
Կրեղիտային համակարգով դասախոսների որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը (18.11.2010)			
Ա. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
1.	3.1.1.	անգլերենի իմացության տարբեր մակարդակների 3 մոդուլ (որից 1-ը պարտադիր)	անգլերենի իմացության տարբեր մակարդակների 6 մոդուլ (որից 1-ը պարտադիր)
2.	3.1.3.	<i>Մասնագիտական պատրաստության կրթամասի</i> առավելագույն բեռնվածությունը 6 կրեղիտ է... Կրթամասը ներառում է 3 մոդուլ...	<i>Մասնագիտական պատրաստության կրթամասի</i> առավելագույն բեռնվածությունը 10 կրեղիտ է... Կրթամասը ներառում է 5 մոդուլ...
3.	3.1.5.	ԵՊՀ-ից դուրս (հանրապետությունում կամ արտերկրում) դասախոսի որակավորման բարձրացման, վերապատրաստման կամ կատարելագործման արդյունքները կարող են ճանաչվել	ԵՊՀ-ից դուրս (հանրապետությունում կամ արտերկրում) դասախոսի որակավորման բարձրացման, վերապատրաստման կամ կատարելագործման արդյունքները (նաև հեռավար ուսուցմամբ) կարող են ճանաչվել
4.	3.2.1.	<i>Հրատարակումներ</i> են գիտական հոդվածը, ուսումնամեթոդական աշխատանքը, ուսումնական ձեռնարկը, դասագիրքը և մենագրությունը:	<i>Հրատարակումներ</i> են գիտական հոդվածը, ուսումնամեթոդական աշխատանքը, ուսումնական ձեռնարկը, դասագիրքը և մենագրությունը (այդ թվում՝ էլեկտրոնային հրատարակմամբ):

5.	3.2.1.	ՀՀ ԲՈՀ-ի հաստատած ցանկի հանդեսում	ՀՀ ԲՈՀ-ի հաստատած ցուցակի պարբերական գիտական հրատարակություններում
6.	3.2.2.	<i>Համաժողովում (աշխատաժողովում կամ գիտաժողովում) զեկուցման</i> համար դասախոսը ստանում է 1 կրեդիտ	<i>Համաժողովում (աշխատաժողովում կամ գիտաժողովում) զեկուցման</i> համար (հրատարակվելու դեպքում) դասախոսը ստանում է 1 կրեդիտ
Հավելված			
7.	Անգլերենը ակադեմիական միջավայրում	1 – 3-րդ մակարդակներ	1 - 6-րդ մակարդակներ
8.	Հրատարակումներ	ՀՀ ԲՈՀ-ի հաստատած ցանկի հանդեսներում	ՀՀ ԲՈՀ-ի հաստատած ցուցակի պարբերական գիտական հրատարակություններում
Բ. ԼՐԱՑՈՒՄՆԵՐ			
9.	3.2.1.1.		Հանրակրթական դպրոցի համար նախատեսված ուսումնական գրականությունից հաշվառվում է միայն դասագիրքը՝ 10 կրեդիտ:
10.	3.2.1.2.		Վերահրատարակված աշխատանքը կրեդիտավորվում է վերամշակված և լրացված լինելու դեպքում, ծրագրի 5-ամյա ժամկետում՝ 1 անգամ:
11.	3.2.1.3.		Դասախոսի մասնագիտության առանձնահատկություններից ելնելով՝ հաշվարկվում են նաև գրանցված գյուտերը, հեղինակած քարտեզները, հետազոտությունները և այլ աշխատանքներ:
Երևանի պետական համալսարանում պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագրի կազմակերպման կանոնակարգ (07.07.2011)			
Ա. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ			
1.	4.7.	Հայտարարված դասընթացը կազմակերպվում է, եթե նրան մասնակցելու հայտ են ներկայացրել սահմանված թվակազմով ունկնդիրներ (8-15՝ ըստ դասընթացների)	Հայտարարված դասընթացը կազմակերպվում է, եթե նրան մասնակցելու հայտ են ներկայացրել սահմանված նվազագույն թվակազմով ունկնդիրներ (8-15՝ ըստ դասընթացների)
Բ. ԼՐԱՑՈՒՄՆԵՐ			
2.	2.3.1.2.		ԵՊՀ դասախոսներն անցնում են ԱՄՆ Բոստոնի համալսարանի կողմից կազմակերպվող «Անգլերենը ակադեմիական միջավայրում» միջազգային հավաստագրումը (iTEP, International - Test of English Proficiency)
3.	2.3.1.3.		Անգլերենի A1 և A2 մակարդակների համար ունկնդիրները հանձնում են ներհամալսարանական քննություն՝ վաստակելով առավելագույնը 3 կրե-

			դիտ (ն՝ A1, ն՝ A2 ստացողները): B1 - C2 մակարդակների համար ունկնդիրները անցնում են միջազգային հավաստագրում:
4.	2.3.1.4.		Միջազգային հավաստագրում անցած և առնվազն B1 շեմը (անգլերենի մասնագետները՝ C2) հաղթահարած ունկնդիրը վաստակում է 6 կրեդիտ: ԵՊՀ-ն ունկնդրի համար (նույն մակարդակի դեպքում) վճարում է 1 անգամ: Պահանջվող շեմը չհաղթահարած ունկնդիրը քննությունը վերահանձնելու համար ինքն է վճարում սահմանված գումարը:
5.	4.9.2.1.		Անգլերենից միջազգային այլ քննություն հանձնած դասախոսները կրեդիտավորվում են ըստ անգլերենի միջազգային քննությունների համարժեքության աղյուսակի

2. Հանձնարարել հետբուհական լրացուցիչ կրթության վարչությանը՝ վերագնահատել դասախոսների կուտակած համապատասխան կրեդիտները՝ հաշվի առնելով ծրագրում և կանոնակարգում կատարված փոփոխություններն ու լրացումները:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Ա. Ն. ՍԻՄՈՆՅԱՆ